

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Կենսունակության բարելավման և հզորացման համար բնակարանային բարեփոխումներ» (THRIVE) ծրագրի վարկային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**



ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Սովորական գործառնություններ)

(«Կենսունակության բարելավման և հզորացման համար բնակարանային
բարեփոխումներ» (THRIVE) ծրագիր)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ

միջև

ԱՄՍԱԹԻՎ՝ 2025 թվականի հոկտեմբերի 30

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Սովորական գործառնություններ)

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ թվագրված _____-ով, կնքված ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Վարկառու) եւ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ (ԱԶԲ) միջեւ:

ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ, ՈՐ՝

Ա) Վարկառուն դիմել է ԱԶԲ-ին վարկ ստանալու համար՝ սույն Վարկային համաձայնագրի 1-ին հավելվածում նկարագրված Ծրագրի նպատակներով,

Բ) նույն ամսաթվով Վարկառուի եւ ԱԶԲ միջեւ կնքված դրամաշնորհային համաձայնագրով Գլոբալ կոնցեսիոն ֆինանսավորման հիմնադրամից Վարկառուին կտրամադրվի ընդհանուր առմամբ տասնվեց միլիոն չորս հարյուր հիսուն հազար ԱՄՆ դոլարի (16,450,000\$) չափով դրամաշնորհի (Դրամաշնորհի)՝ Ծրագրի նպատակների համար, եւ

Գ) ԱԶԲ-ն համաձայնել է ԱԶԲ-ի սովորական կապիտալ միջոցներից վարկ տրամադրել Վարկառուին՝ սույն համաձայնագրով սահմանված ժամկետներով եւ պայմաններով,

ՀԵՏԵՎԱԲԱՐ ԿՈՂՄԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ.

ՀՈԴՎԱԾ I

Վարկավորման կանոնները. սահմանումներ

Բաժին 1.01. ԱԶԲ-ի՝ 2022 թվականի հունվարի 1-ով թվագրված Սովորական գործառնությունների վարկավորման կանոնների (Վարկավորման կանոններ) բոլոր դրույթները սույն Վարկային համաձայնագրի նկատմամբ կիրառելի են նույն ուժով ու գործողությամբ այնպես, ինչպես եթե դրանք ամբողջությամբ

սահմանված լինելին սույն համաձայնագրում, այնուամենայնիվ, հետեւյալ փոփոխություններով.

ա) Բաժին 2.01(խե)-ն հանվել է եւ փոխարինվել է հետեւյալով.

««Ծրագիր» նշանակում է ծրագիր, որի համար ԱԶԲ-ն համաձայնել է տրամադրել Վարկը՝ Վարկային համաձայնագրում սահմանված կարգով, ընդ որում՝ այդպիսի կարգը կարող է ըստ անհրաժեշտության փոփոխվել ԱԶԲ-ի եւ Վարկառուի միջեւ ձեռք բերված համաձայնությամբ:»:

բ) «Նախագիծ» եզրույթը Վարկավորման կանոններում գործածվելու դեպքում պետք է փոխարինվի «Ծրագիր» եզրույթով:

գ) Բաժին 2.01(խե)-ն հանվել է եւ փոխարինվել է հետեւյալով.

««Ծրագրի իրականացման մարմին» նշանակում է մարմին կամ մարմիններ, որոնք պատասխանատու են Վարկային համաձայնագրին համապատասխան Ծրագիրն իրականացնելու համար:»:

դ) «Նախագծի իրականացման մարմին» եզրույթը Վարկավորման կանոններում գործածվելու դեպքում պետք է փոխարինվի «Ծրագրի իրականացման մարմին» եզրույթով:

Բաժին 1.02. Սույն Վարկային համաձայնագրում գործածվելու դեպքում Վարկավորման կանոններով սահմանված եզրույթները գործածվում են Վարկավորման կանոններով սահմանված իմաստներով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Համաձայնագրում դրանք փոփոխվում են կամ կիրառվում են այլ համատեքստում: Սույն Վարկային համաձայնագրում գործածված լրացուցիչ եզրույթներն ունեն հետեւյալ իմաստները.

ա) «Կոռուպցիայի դեմ պայքարի հարցերով ուղեցույցներ» նշանակում է ԱԶԲ-ի՝ Ծրագրերի արդյունքների վրա հիմնված վարկավորման ժամանակ խարդախության, կոռուպցիայի եւ այլ արգելված գործողությունների կանխարգելման կամ մեղմացման ուղեցույցներ, ինչպես ներկայացված է Ծրագրի

իրականացման փաստաթղթի (ԾԻՓ) հավելվածում.

բ) «Դեպոզիտային հաշիվ» նշանակում է սույն Վարկային համաձայնագրի 3-րդ հավելվածի 2-րդ պարբերությամբ սահմանված հաշիվը.

գ) «ՀՀԿՑ» նշանակում է հատկացումների հետ կապված յուրաքանչյուր ցուցանիշ, ինչպես նշված է ՀՀԿՑ մատրիցում.

դ) «ՀՀԿՑ մատրից» նշանակում է Ծրագրի համար նախատեսված ՀՀԿՑ մատրից, ինչպես ներկայացված է սույն Վարկային համաձայնագրի 3-րդ հավելվածի 2-րդ առդիրում, որը ժամանակ առ ժամանակ թարմացվում է Վարկառուի եւ ԱԶԲ-ի կողմից.

ե) «ՀՀԿՑ ստուգման արձանագրություն» նշանակում է Վարկառուի կողմից յուրաքանչյուր ՀՀԿՑ-ի կատարումը ստուգելու վերաբերյալ արձանագրություն, ինչպես սահմանված է ԾԻՓ-ում.

զ) «Ողջամիտ ծախսեր» նշանակում է սույն Վարկային համաձայնագրի 4-րդ հավելվածի 2-րդ առդիրում նշված ողջամիտ ծախսերը.

է) «Բնապահպանական երաշխիքներ» նշանակում է Երաշխիքների քաղաքականության փաստաթղթի (ԵՔՓ) V գլխում շարադրված նպատակներն ու քաղաքականության սկզբունքները.

ը) «Դրամավարկային տարի» նշանակում է Վարկառուի դրամավարկային տարին, որն սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից եւ ավարտվում դեկտեմբերի 31-ին.

թ) «ԲՏԸԲԱԾ» նշանակում է Վարկառուի՝ Հայաստանի կողմից իրականացվող՝ Բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագիրը, որն աջակցություն է ստանում Ծրագրի շրջանակում.

ժ) «Բարձրարժեք պայմանագրեր» նշանակում է՝ i) աշխատանքների ձեռքբերման, շահագործման համար պատրաստ վիճակում հանձնելու եւ

մատակարարման ու տեղադրման պայմանագրեր, որոնց արժեքը յուրաքանչյուր պայմանագրի համար համարժեք է 50 միլիոն ԱՄՆ դոլարին կամ ավելին է, ii) ապրանքների ձեռքբերման պայմանագրեր, որոնց արժեքը յուրաքանչյուր պայմանագրի համար համարժեք է 30 միլիոն ԱՄՆ դոլարին կամ ավելին է, iii) տեղեկատվական տեխնոլոգիաների կամ ոչ խորհրդատվական ծառայությունների պայմանագրեր, որոնց արժեքը յուրաքանչյուր պայմանագրի համար համարժեք է 20 միլիոն ԱՄՆ դոլարին կամ ավելին է, եւ iv) խորհրդատվական ծառայությունների պայմանագրեր, որոնց արժեքը յուրաքանչյուր պայմանագրի համար համարժեք է 15 միլիոն ԱՄՆ դոլարին կամ ավելին է.

ժա) «Բնիկ ժողովուրդների երաշխիքներ» նշանակում է ԵԲՓ-ի գլխում շարադրված նպատակներն ու քաղաքականության սկզբունքները.

ժբ) «Հարկադիր վերաբնակեցման երաշխիքներ» նշանակում է ԵԲՓ-ի V գլխում շարադրված նպատակներն ու քաղաքականության սկզբունքները.

ժգ) «Վարկային մասհանումների ձեռնարկ» նշանակում է ԱԶԲ-ի Վարկային մասհանումների ձեռնարկը (2022 թվական, ըստ անհրաժեշտության կատարվող փոփոխություններով).

ժդ) «ԾԻՓ» նշանակում է ծրագրի իրականացման փաստաթուղթ՝ 2025 թվականի օգոստոսի 19-ին թվագրված Ծրագրի համար, որը ժամանակ առ ժամանակ թարմացվում է Վարկառուի եւ ԱԶԲ-ի կողմից.

ժե) «Ծրագրի գործողությունների ծրագիր» նշանակում է գործողությունների ծրագիր՝ 2025 թվականի օգոստոսի 19-ին թվագրված Ծրագրի համար, որը ժամանակ առ ժամանակ թարմացվում է Վարկառուի եւ ԱԶԲ-ի կողմից.

ժզ) «Ծրագրային գործողություններ» նշանակում է Ծրագրի գործողությունների ծրագրով սահմանված գործողություններ.

ժէ) «Ծրագրի ավարտի ամսաթիվ» նշանակում է սույն վարկային

համաձայնագրի 1-ին հավելվածի 3-րդ պարբերության մեջ նշված ամսաթիվը կամ Վարկառուի եւ ԱԶԲ կողմից համաձայնեցված այլ ամսաթիվ.

ժը) «Ծրագրի իրականացման մարմին»՝ Վարկավորման կանոնների նպատակներից ելնելով եւ դրանց իմաստով նշանակում է Վարկառուի Ֆինանսների նախարարություն կամ նրա ցանկացած իրավահաջորդ, որն ընդունելի է ԱԶԲ-ի համար եւ պատասխանատու է Ծրագրի իրականացման համար.

ժթ) «ԵՔՓ» նշանակում է ԱԶԲ-ի Երաշխիքների քաղաքականության փաստաթուղթ (2009 թվական), եւ

ի) «Աղյուսակ» նշանակում է սույն Վարկային համաձայնագրի 3-րդ հավելվածի 1-ին աղբյրում ներկայացված վարկային միջոցների բաշխման եւ առբերման աղյուսակը:

ՀՈԴՎԱԾ II

Վարկը

Բաժին 2.01. ա) ԱԶԲ-ն համաձայնում է ԱԶԲ-ի սովորական կապիտալ միջոցներից Վարկառուին տրամադրել երկու հարյուր հիսուն միլիոն ԱՄՆ դոլարի (250,000,000\$) չափով վարկ, ընդ որում, նշված գումարը կարող է ըստ անհրաժեշտության փոփոխվել Արժույթի փոխարկման միջոցով՝ սույն Վարկային համաձայնագրի 2.06 բաժնի դրույթներին համապատասխան:

բ) Վարկի մայր գումարի մարման ժամկետը 17 տարի է, իսկ վճարման արտոնյալ ժամանակահատվածը՝ ինչպես սահմանված է ներքոհիշյալ «գ» ենթաբաժնով:

գ) Ներքոհիշյալ «բ» ենթաբաժնում գործածված «արտոնյալ ժամանակահատված» եզրույթը նշանակում է մայր գումարի առաջին մարման

օրվան նախորդող ժամանակահատվածը՝ սույն Վարկային համաձայնագրի 2-րդ հավելվածով սահմանված մարման ժամանակացույցին համապատասխան:

Բաժին 2.02. Վարկառուն պարբերաբար ԱԶԲ-ին վճարում է տոկոսներ, որոնք հաշվարկվում են Վարկի առհանված եւ չվճարված մայր գումարի նկատմամբ տոկոսների հաշվեգրման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար սահմանված այն տոկոսադրույքով, որը հավասար է հետեւյալ գումարին.

ա) ապահովված օվերնայթ ֆոնդային տոկոսադրույք (SOFR), եւ

բ) 0.60%՝ Վարկավորման կանոնների 3.02 բաժնով նախատեսված կարգով, հանած 0.10%՝ Վարկավորման կանոնների 3.03 բաժնով նախատեսված կարգով, եւ

գ) մարման ժամկետի ռիսկի համար հավելավճարի 0.30%՝ Վարկավորման կանոնների 3.03 բաժնով նախատեսված կարգով:

Բաժին 2.03. Վարկառուն տարեկան վճարում է 0.15%-ի չափով պարտավորավճար: Այս վճարը հաշվեգրվում է Վարկի ամբողջ գումարի նկատմամբ (հանած պարբերաբար առհանվող գումարները)՝ սկսած սույն Վարկային համաձայնագրի կնքման 60-րդ օրվանից:

Բաժին 2.04. Վարկի տոկոսագումարը եւ մյուս վճարները կատարվում են կիսամյակը մեկ՝ յուրաքանչյուր տարվա [] դեկտեմբերի 15-ին եւ [] հունիսի 15-ին:

Բաժին 2.05. Վարկառուն Վարկային հաշվից առհանված Վարկի մայր գումարը վերադարձնում է սույն Վարկային համաձայնագրի 2-րդ հավելվածի դրույթներին համապատասխան:

Բաժին 2.06. ա) Պարտքի ողջամիտ կառավարման նպատակով Վարկառուն կարող է ցանկացած ժամանակ դիմել Վարկի պայմաններում հետեւյալ փոփոխությունները կատարելու խնդրանքով.

ի) Վարկի առհանված եւ չվճարված կամ չառհանված ամբողջ մայր գումարի կամ դրա մի մասի արժույթի փոխարկում հաստատված արժույթով,

ii) Վարկի առհանված եւ չվճարված ամբողջ մայր գումարի կամ դրա մի մասի նկատմամբ կիրառվող տոկոսադրույքի փոփոխում Լողացող տոկոսադրույքից Ֆիքսված տոկոսադրույքի կամ հակառակը, եւ

iii) Վարկի առհանված եւ չվճարված ամբողջ մայր գումարի կամ դրա մի մասի նկատմամբ կիրառվող Լողացող տոկոսադրույքի սահմանափակում՝ այդ Լողացող տոկոսադրույքի նկատմամբ տոկոսադրույքի սահմանային չափը կամ տոկոսադրույքի առավելագույն եւ նվազագույն չափերը սահմանելու միջոցով:

բ) Վերոնշյալ «ա» ենթաբաժնի համաձայն հայցված եւ ԱԶԲ-ի կողմից ընդունելի փոփոխության առաջարկը համարվում է «Փոխարկում»՝ Վարկավորման կանոնների 2.01 բաժնի «ե» պարբերությամբ սահմանված կարգով, եւ ուժի մեջ է մտնում Վարկավորման կանոնների V հոդվածի դրույթներին եւ Փոխարկման ուղեցույցին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ III

Վարկային միջոցների օգտագործումը

Բաժին 3.01. Վարկառուն Վարկային միջոցներն օգտագործում է Ծրագրի իրականացման համար կատարված ծախսերը ֆինանսավորելու համար՝ սույն Վարկային համաձայնագրի դրույթներին համապատասխան:

Բաժին 3.02. Վարկային միջոցները բաշխվում եւ առհանվում են սույն Վարկային համաձայնագրի 3-րդ հավելվածի դրույթներին համապատասխան, ընդ որում, նշված հավելվածը կարող է ըստ անհրաժեշտության փոփոխվել Վարկառուի եւ ԱԶԲ-ի միջեւ ձեռք բերված համաձայնությամբ:

Բաժին 3.03. Վարկավորման կանոնների 9.02 բաժնի նպատակներով Վարկի փակման ամսաթիվ է համարվում 2030 թվականի դեկտեմբերի 31-ը կամ այլ ամսաթիվ, որի վերաբերյալ ԱԶԲ-ն եւ Վարկառուն կարող են ըստ անհրաժեշտության համաձայնության գալ:

ՀՈԴՎԱԾ IV

Հատուկ պարտավորություններ

Բաժին 4.01. Ծրագիրն իրականացնելիս Վարկառուն կատարում է սույն Վարկային համաձայնագրի 4-րդ հավելվածով եւ Դրամաշնորհային համաձայնագրով սահմանված բոլոր պարտավորությունները կամ ապահովում է դրանց կատարումը:

Բաժին 4.02. ա) Վարկառուն պարտավորվում է՝ i) Ծրագրի համար վարել առանձին հաշիվներ եւ գրանցամատյաններ, ii) կազմել Ծրագրի տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ ԱԶԲ-ի համար ընդունելի ֆինանսական հաշվետվությունների ստանդարտներին համապատասխան, iii) ապահովել նշված ֆինանսական հաշվետվությունների տարեկան աուդիտ անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումը, փորձառությունը եւ հանձնարարականները ընդունելի են ԱԶԲ-ի համար՝ ըստ ԱԶԲ-ի համար ընդունելի աուդիտորական չափանիշների, iv) յուրաքանչյուր այդպիսի աուդիտի շրջանակում ապահովել աուդիտորների կողմից հաշվետվության պատրաստումը, որն ընդգրկում է ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ նրանց եզրակացությունը (եզրակացությունները), ինչպես նաեւ նամակ ղեկավարությանը (որում ներկայացված են Ծրագրի ներքին վերահսկողության համակարգում աուդիտի ընթացքում հայտնաբերված թերությունները, եթե այդպիսիք կան), եւ v) յուրաքանչյուր դրամավարկային տարվա ավարտից ոչ ուշ, քան 6 ամիս հետո ԱԶԲ-ին տրամադրել նշված աուդիտավորված ֆինանսական հաշվետվությունների, աուդիտորական հաշվետվության եւ ղեկավարությանն ուղղված նամակի օրինակները՝ բոլորն անգլերենով, ինչպես նաեւ այն տեղեկությունները, որոնք վերաբերում են այդ փաստաթղթերին եւ դրանց աուդիտին, որը ԱԶԲ-ն կարող է ժամանակ առ ժամանակ ողջամտորեն պահանջել:

բ) ԱԶԲ-ն հրապարակում է Ծրագրի համար կազմված տարեկան աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև այդ հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորների եզրակացությունը՝ ԱԶԲ-ի կողմից դրանց ընդունելիությունը հաստատվելուց հետո 14 օրվա ընթացքում՝ դրանք տեղադրելով ԱԶԲ-ի կայքէջում:

գ) Վարկառուն պարտավորվում է հնարավորություն տալ ԱԶԲ-ին ԱԶԲ-ի պահանջով քննարկելու Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները եւ Վարկառուի ֆինանսական հարցերը, որքանով դրանք առնչվում են Ծրագրին, այն աուդիտորների հետ, որոնք նշանակվել են վերը նշված ենթապարբերության «ա» ենթաբաժնի (iii) ենթակետի համաձայն, ինչպես նաև այդ աուդիտորների ցանկացած ներկայացուցչի լիազորում եւ պարտավորեցնում է մասնակցել ԱԶԲ-ի կողմից նախաձեռնված այդպիսի քննարկումներին: Ասվածը կիրառվում է այն պայմանով, որ այդպիսի քննարկումները տեղի ունենան Վարկառուի լիազորված ներկայացուցչի ներկայությամբ, եթե Վարկառուն այլ բանի շուրջ համաձայնության չի եկել:

Բաժին 4.03. Վարկավորման կանոնների 7.01 եւ 7.04 բաժիններում նշված հաշվետվությունների եւ տեղեկատվության շրջանակներում Վարկառուն ԱԶԲ-ին է տրամադրում կամ ապահովում է, որ տրամադրվեն՝ ա) կիսամյակային հաշվետվություններ, որոնք վերաբերում են Ծրագրի իրականացմանը, այդ թվում՝ ՀՀԿՑ իրագործմանը, Ծրագրային գործողությունների իրականացմանն ու Ողջամիտ ծախսերին, եւ բ) ԱԶԲ-ի ողջամիտ պահանջով՝ լրացուցիչ տեղեկություններ՝ վերոհիշյալ (ա) ենթապարբերության մեջ նկարագրված գրանցամատյանների վերաբերյալ, եւ այլ տեղեկություններ՝ Ծրագրի իրականացման վերաբերյալ:

Բաժին 4.04. Վարկառուն պարտավորվում է հնարավորություն տալ ԱԶԲ-ի ներկայացուցիչներին ուսումնասիրելու Ծրագիրը եւ ցանկացած համապատասխան գրանցամատյան ու փաստաթուղթ:

ՀՈԴՎԱԾ V

Իրավունքների կասեցում. Վարկի վաղաժամ մարման պահանջ

Բաժին 5.01. Վարկավորման կանոնների 9.01 բաժնի «ժգ» կետի նպատակով սահմանվում է հետեւյալ լրացուցիչ դեպքը, որի առկայության դեպքում կարող է կասեցվել Վարկառուի՝ Վարկային հաշվից առհանումներ կատարելու իրավունքը. Դրամաշնորհը դարձել է կասեցման կամ չեղարկման ենթակա:

Բաժին 5.02. Վարկավորման կանոնների 9.07 բաժնի «ա» կետի (iv) ենթակետի նպատակով սահմանվում է հետեւյալ լրացուցիչ դեպքը, որի առկայության դեպքում կարող է կիրառվել վարկի վաղաժամ մարման պահանջ. տեղի է ունեցել սույն Վարկային համաձայնագրի 5.01 բաժնում նշված դեպքը:

ՀՈԴՎԱԾ VI

Ուժի մեջ մտնելը

Բաժին 6.01. Վարկավորման կանոնների 10.01 բաժնի «զ» ենթաբաժնի նպատակով հետեւյալ պայմանները սահմանվում են որպես լրացուցիչ նախապայմաններ՝ սույն Վարկային համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար.

ա) Դրամաշնորհային համաձայնագիրը պետք է լինի պատշաճ կերպով կատարված եւ տրամադրված Վարկառուի անունից, եւ դա ուժի մեջ մտնելու համար սահմանված բոլոր նախապայմանները (բացառությամբ սույն Վարկային համաձայնագիրն ուժի մեջ մտնելը պահանջող նախապայմանի) պետք է լինեն կատարված, եւ

բ) Վարկառուն պարտավորվում է ապահովել, որ հիփոթեքային մարումների, տոկոսագումարների մարումների եւ դրամական աջակցությունների համար նախատեսված ծախսերը տարբերակելու համար սահմանվեն առանձին բյուջետային ծածկագրեր:

Բաժին 6.02. Վարկավորման կանոնների 10.02 բաժնի «դ» կետի նպատակով հետեւյալը սահմանվում է որպես լրացուցիչ հարց, որը պետք է ընդգրկվի ԱԶԲ-ին տրամադրվելիք եզրակացության կամ եզրակացությունների մեջ, որ Դրամաշնորհի համաձայնագիրը պատշաճ հավանության է արժանացել կամ վավերացվել է Վարկառուի կողմից, կատարվել եւ հանձնվել է Վարկառուի անունից եւ համարվում է իրավաբանական ուժ ունեցող փաստաթուղթ Վարկառուի համար՝ ըստ դրա պայմանների բացառապես այն դեպքում, երբ սույն Վարկային համաձայնագիրը մտնում է ուժի մեջ:

Բաժին 6.03. Վարկավորման կանոնների 10.04 բաժնի նպատակներով սույն Վարկային համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ամսաթիվ է սահմանվում սույն Վարկային համաձայնագրի կնքման ամսաթվի 90-րդ օրվան հաջորդող օրը:

ՀՈԴՎԱԾ VII

Այլ դրույթներ

Բաժին 7.01. Վարկավորման կանոնների 12.02 բաժնի նպատակներով Վարկառուի ֆինանսների նախարարը նշանակվում է որպես Վարկառուի ներկայացուցիչ:

Բաժին 7.02. Վարկավորման կանոնների 12.01 բաժնի նպատակներով նշվում են հետեւյալ հասցեները.

Վարկառուի դեպքում՝

Ֆինանսների նախարարություն

Մելիք Ադամյան փող. 1

Երեւան 0010, Հայաստան

Ֆաքս՝

(374 11) 800-132.

ԱԶԲ-ի դեպքում՝

Ասիական զարգացման բանկ

ԱԶԲ պողոտա 6

քաղ. Մանդալույոնգ

1550 Մետրո Մանիլա

Ֆիլիպիններ

Ֆաքս՝

(632) 8636-2444:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ սույն համաձայնագրի կողմերը, ի դեմս պատշաճ
կերպով լիազորված իրենց ներկայացուցիչների, իրենց անունից ստորագրում են
սույն Վարկային համաձայնագիրը վերը նշված օրվա դրությամբ եւ փոխանցում
այն ԱԶԲ-ի գլխամասային գրասենյակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

[Անունը եւ պաշտոնը]

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ

[Անունը եւ պաշտոնը]

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Ծրագրի նկարագրությունը

1. Ծրագրի նպատակը ԲՏԸԲԱԾ-ի իրականացումը խթանելն է՝ էթնիկ հայ փախստականների՝ երկարաժամկետ բնակարանային պայմաններ ստանալու եւ սոցիալական ու տնտեսական բարելավված պայմաններ ունենալու հնարավորություններն ընդլայնելու համար:

2. Ծրագիրը ներառում է հետեւյալ բաղադրիչները.

ա) **Բարելավված սոցիալական բնակարանային կառավարման քաղաքականության շրջանակի ձեւավորում՝** i) հիմնական պետական շահագրգիռ կողմերի՝ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության, Ազգային հիփոթեքային ընկերության, Քաղաքաշինության կոմիտեի եւ Ֆինանսների նախարարության ներգրավմամբ, ինչպես նաեւ առնվազն 35% կանանց ներկայացվածությամբ միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու, եւ ii) համապատասխան փախստական ընտանիքների համար գենդերային տեղեկացվածության աստիճանի բարձրացման ապահովման միջոցով,

բ) **Դիմացկուն եւ ներառական բնակարանային ֆինանսավորման համակարգերի ձեւավորում՝** i) բնապահպանական առումով կայուն եւ սեյսմիկ եւ այլ բնական աղետների նկատմամբ դիմացկուն գենդերային եւ ներառական շինարարական չափանիշների հաստատման եւ (կամ) կատարելագործման, ինչպես նաեւ շինարարական նախագծերում եւ շինարարության գործընթացում դրանց ընդգրկման, եւ ii) էթնիկ հայ փախստականներին եւ Հայաստանի մյուս անապահով քաղաքացիներին ցուցաբերվող այլ աջակցության ծրագրերի ներդաշնակեցման միջոցով,

գ) **Շուկայի կարգավորման եւ ֆինանսավորման մեխանիզմների բարելավում՝** i) Ազգային հիփոթեքային ընկերության լծակի հարաբերակցությունները կարգավորող կանոնակարգերի վերանայման, ii) հիփոթեքային վարկով ապահովված արժեթղթերի սեքյուրիտիզացիայի կամ

պլանավորված թողարկման ռազմավարության միջոցով ծածկված պարտատոմսերի ծրագրի (ծրագրերի) ներդրումն ապահովելու, եւ iii) այնպիսի կանոնակարգի ընդունման միջոցով, որով կառուցապատողներից պահանջվում է կատարել նվազագույն ֆինանսական պարտավորություններն ու հանձնառությունները,

դ) **Հաստատությունների հզորացում եւ շահառուների իրազեկվածության բարձրացում՝** i) բնակարանային ֆինանսավորման եւ բնակարանային ծրագրերի կառավարման ոլորտում Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության, Ազգային հիփոթեքային ընկերության եւ բնակարանային ոլորտին առնչվող այլ համապատասխան հաստատությունների կարողությունների զարգացման, եւ ii) ԲՏԸԲԱԾ շահառուների ֆինանսական գրագիտության զարգացման միջոցով:

3. Ծրագրի իրականացումը նախատեսվում է ավարտել մինչեւ 2030 թվականի դեկտեմբերի 31-ը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՄԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

1. Ստորեւ բերված աղյուսակում ներկայացվում են Վարկի մայր գումարի մարման ամսաթվերը եւ դրանցից յուրաքանչյուրի ժամանակ վճարվելիք՝ Վարկի ընդհանուր մայր գումարի մասնաբաժինը՝ արտահայտված տոկոսներով (Վճարման մասնաբաժին): Եթե Վարկի մայր գումարի առաջին մարման օրվա դրությամբ վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված են, ապա մայր գումարի մարման յուրաքանչյուր օրվա դրությամբ Վարկառուի կողմից մարվող Վարկի մայր գումարի չափը ԱԶԲ-ի կողմից որոշվում է՝ ա) մայր գումարի առաջին մարման օրվա դրությամբ Վարկի՝ առհանված եւ չվճարված ընդհանուր մայր գումարը բազմապատկելով, բ) մայր գումարի յուրաքանչյուր մարման օրվա դրությամբ Վճարման մասնաբաժնով, իսկ մարման ենթակա այդ գումարներն ըստ անհրաժեշտության ճշգրտվում են սույն հավելվածի 4-րդ պարբերության մեջ նշված գումարները նվազեցնելու նպատակով, որոնց նկատմամբ կիրառվում է Արժույթի փոխարկումը:

Վճարման ամսաթիվը	Վճարման մասնաբաժինը (տոկոսային արտահայտությամբ)
2035 թվականի դեկտեմբերի 15	2.941176
2036 թվականի հունիսի 15	2.941176
2036 թվականի դեկտեմբերի 15	2.941176
2037 թվականի հունիսի 15	2.941176
2037 թվականի դեկտեմբերի 15	2.941176
2038 թվականի հունիսի 15	2.941176
2038 թվականի դեկտեմբերի 15	2.941176
2039 թվականի հունիսի 15	2.941176
2039 թվականի դեկտեմբերի 15	2.941176
2040 թվականի հունիսի 15	2.941176
2040 թվականի դեկտեմբերի 15	2.941176
2041 թվականի հունիսի 15	2.941176
2041 թվականի դեկտեմբերի 15	2.941176

Վճարման ամսաթիվը	Վճարման մասնաբաժինը (տոկոսային արտահայտությամբ)
2042 թվականի հունիսի 15	2.941176
2042 թվականի դեկտեմբերի 15	2.941176
2043 թվականի հունիսի 15	2.941176
2043 թվականի դեկտեմբերի 15	2.941176
2044 թվականի հունիսի 15	2.941176
2044 թվականի դեկտեմբերի 15	2.941176
2045 թվականի հունիսի 15	2.941176
2045 թվականի դեկտեմբերի 15	2.941176
2046 թվականի հունիսի 15	2.941176
2046 թվականի դեկտեմբերի 15	2.941176
2047 թվականի հունիսի 15	2.941176
2047 թվականի դեկտեմբերի 15	2.941176
2048 թվականի հունիսի 15	2.941176
2048 թվականի դեկտեմբերի 15	2.941176
2049 թվականի հունիսի 15	2.941176
2049 թվականի դեկտեմբերի 15	2.941176
2050 թվականի հունիսի 15	2.941176
2050 թվականի դեկտեմբերի 15	2.941176
2051 թվականի հունիսի 15	2.941176
2051 թվականի դեկտեմբերի 15	2.941176
2052 թվականի հունիսի 15	2.941192
Ընդամենը	100.000000

2. Եթե Վարկի մայր գումարի առաջին մարման օրվա դրությամբ վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված չեն, ապա մայր գումարի մարման յուրաքանչյուր օրվա դրությամբ Վարկառուի կողմից մարվող Վարկի մայր գումարի չափը որոշվում է հետևյալ կերպ.

ա) Վարկի մայր գումարի առաջին մարման օրվա դրությամբ վարկային միջոցների առհանման չափով Վարկառուն վերադարձնում է այդ օրվա դրությամբ

առհանձնված եւ չվճարված գումարը՝ սույն հավելվածի 1-ին պարբերությանը համապատասխան,

բ) Վարկի մայր գումարի առաջին մարման օրվանից հետո ցանկացած առհանձնան դեպքում գումարները վերադարձվում են այդ առհանձնանը հաջորդող՝ Վարկի մայր գումարի մարման յուրաքանչյուր օր՝ ԱԶԲ-ի կողմից սահմանված գումարի չափով՝ այդպիսի յուրաքանչյուր առհանձնան գումարը բազմապատկելով կոտորակով, որի համարիչը սույն հավելվածի 1-ին պարբերության աղյուսակում նշված՝ մայր գումարի տվյալ մարման օրվա դրությամբ սկզբնական վճարման մասնաբաժինն է (Սկզբնական վճարման մասնաբաժին), իսկ հայտարարը՝ այդ օրը կամ դրանից հետո ընկնող մայր գումարի մարման օրերի մնացած բոլոր Սկզբնական վճարման մասնաբաժինների ընդհանուր գումարը. մարման ենթակա այդ գումարներն ըստ անհրաժեշտության ճշգրտվում են սույն հավելվածի 4-րդ պարբերության մեջ նշված ցանկացած այնպիսի գումար նվազեցնելու նպատակով, որի նկատմամբ կիրառվում է Արժույթի փոխարկումը:

3. Մայր գումարի մարման յուրաքանչյուր օրվա դրությամբ միայն վճարման ենթակա մայր գումարները հաշվարկելու նպատակներով մայր գումարի մարման յուրաքանչյուր օրվա նախորդող 2 օրացուցային ամսվա ընթացքում կատարված առհանումները համարվում են որպես առհանված եւ չվճարված՝ առհանձնան օրվան հաջորդող՝ մայր գումարի մարման երկրորդ օրվա դրությամբ, եւ ենթակա են վճարման առհանձնան օրվան հաջորդող՝ մայր գումարի մարման երկրորդ օրվանից սկսած՝ մայր գումարի մարման յուրաքանչյուր օր:

4. Անկախ սույն հավելվածի 1-ին եւ 2-րդ պարբերությունների դրույթներից՝ Վարկի մայր գումարի առհանված ամբողջ գումարը կամ դրա որեւէ մաս հաստատված արժույթի փոխարկելու դեպքում նշված հաստատված արժույթի այդ կերպ փոխարկված գումարը, որը ենթակա է մարման փոխարկման ժամանակահատվածում ընկնող՝ մայր գումարի մարման յուրաքանչյուր օրվա դրությամբ, որոշվում է ԱԶԲ-ի կողմից՝ անմիջապես նշված փոխարկումից առաջ գործող արժույթով արտահայտված գումարը բազմապատկելով՝ ա) կա՛մ արժույթի

փոխարժեքով, որն արտացոլում է ԱԶԲ-ի կողմից տվյալ փոխարկման հետ կապված արժույթի հեջավորման գործարքի շրջանակներում վճարվելիք՝ հաստատված արժույթով մայր գումարները, բ) կա՛մ եթե ԱԶԲ-ն, Փոխարկման ուղեցույցին համապատասխան, այդպիսի որոշում կայացնի, ապա Սահմանված տոկոսադրույքի (Screen Rate) փոխարժեքի բաղադրիչով:

5. Եթե Վարկի մայր գումարի առհանված եւ չվճարված մասը պարբերաբար արտահայտվում է վարկի մեկից ավելի արժույթներով, ապա սույն հավելվածի դրույթները կիրառվում են Վարկի յուրաքանչյուր արժույթով արտահայտված գումարի համար առանձին այնպես, որ յուրաքանչյուր այդպիսի գումարի համար մշակվի մարման առանձին ժամանակացույց:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Վարկային միջոցների հատկացումը եւ առհանումը

Ընդհանուր դրույթներ

1. Բացառությամբ սույն հավելվածում սահմանված ձեւի կամ ԱԶԲ-ի հետ այլ համաձայնություն ձեռք բերելու դեպքերի՝ Վարկային միջոցները մասհանվում են Վարկային մասհանումների ձեռնարկին համապատասխան:

Դեպոզիտային հաշիվ

2. Վարկային հաշվից առհանում կատարելու վերաբերյալ առաջին դիմումը ԱԶԲ ներկայացնելուց առաջ Վարկառուն Պետական գանձապետարանում Ծրագրի համար որպես Դեպոզիտային հաշիվ նշում է Ծրագրի իրականացման մարմնի անունով հաշիվ (Դեպոզիտային հաշիվ), որին մուտքագրվում են Հայաստանի Կենտրոնական բանկում Վարկառուի՝ Գանձապետական միասնական հաշվի միջոցով Վարկային հաշվից կատարվող բոլոր առհանումները (որի վերաբերյալ մանրամասները Վարկառուն պատշաճ կերպով ներկայացնում է ԱԶԲ առհանման պահանջի ժամանակ):

3. Վարկառուն, Դեպոզիտային հաշվի հետ կապված, վարում է առանձին գրանցամատյաններ՝ ԱԶԲ-ի համար ընդունելի հաշվապահական սկզբունքներին համապատասխան:

Վարկային հաշվից առհանելու հիմքը

4. ա) Աղյուսակում նշված են այն վարկային գումարները, որոնք նախատեսված են Վարկառուի կողմից համապատասխան ՀՀԿՑ նպատակների ձեռքբերման դեպքում ՀՀԿՑ-ի մասով առհանման համար, ինչպես սահմանված է

ՀՀԿՑ մատրիցում: Աղյուսակում ներկայացված տարիները ցուցիչ են համարվում: Դրանք չեն սահմանափակում միջոցների առհանումն այն ՀՀԿՑ նպատակների համար, որոնք ձեռք են բերվել նշված տարուց շուտ կամ ուշ՝ պայմանով, որ այդ ՀՀԿՑ նպատակները ձեռք են բերվել մինչև Ծրագրի ավարտի ամսաթիվը:

բ) ԱԶԲ-ն կարող է Վարկառուին ծանուցելու միջոցով վերաբաշխել աղյուսակում նշված Վարկային գումարները նույն ՀՀԿՑ-ի շրջանակներում կամ մի ՀՀԿՑ-ից դեպի մեկ այլ ՀՀԿՑ:

5. Նախքան ՀՀԿՑ-ի մասով Վարկային հաշվից առհանում կատարելու որեւէ հայտ ներկայացնելը Վարկառուն ԱԶԲ է ներկայացնում ՀՀԿՑ ստուգման արձանագրությանը համապատասխան բավարար ապացույցներ, որոնք վկայում են որ՝ ա) տվյալ ՀՀԿՑ-ն ամբողջությամբ իրականացվել է, կամ բ) այն ՀՀԿՑ-ի դեպքում, որի համար մասնակի առհանում է թույլատրվում (ինչպես նշված է ՀՀԿՑ մատրիցում), տվյալ ՀՀԿՑ-ն իրականացվել է այն ծավալով, որը պահանջվում է ՀՀԿՑ ստուգման արձանագրությամբ սահմանված մասնակի առհանման համար: ԱԶԲ-ի կողմից հաստատում ստանալուց հետո, որ ՀՀԿՑ-ն իրականացվել է ամբողջությամբ կամ մասնակիորեն, Վարկառուն կարող է ԱԶԲ-ին ներկայացնել հայտ՝ տվյալ ՀՀԿՑ-ի համար համապատասխան Վարկային գումարի առհանման վերաբերյալ:

Նախնական ֆինանսավորում եւ Նախորդ արդյունքների ֆինանսավորում

6. ա) Նախքան ՀՀԿՑ-ների ձեռքբերումը Վարկառուն կարող է Վարկային հաշվից առհանել նախնական ֆինանսավորման գումար՝ Ծրագրի ֆինանսական պահանջները բավարարելու եւ նշված ՀՀԿՑ-ների իրականացմանն աջակցելու նպատակով՝ պայմանով, որ նախնական ֆինանսավորման չմարված գումարը որեւէ պահի չգերազանցի Վարկի ընդհանուր գումարի 25 տոկոսը: ԱԶԲ-ն նշված նախնական ֆինանսավորման չմարված գումարը կամ դրա ցանկացած մաս հանում է ՀՀԿՑ-ների ձեռքբերման դեպքում հատկացման ենթակա Վարկային

միջոցներից:

բ) Վարկառուն կարող է Վարկային հաշվից առհանել միջոցներ այն ՀՀԿՑ-ների համար, որոնք ձեռք են բերվել մինչև սույն Վարկային համաձայնագիրն Ուժի մեջ մտնելու ամսաթիվը, բայց ոչ ավելի վաղ, քան Վարկային համաձայնագրի ամսաթվից 12 ամիս առաջ՝ պայմանով, որ նախորդ արդյունքների համար այդպիսի առհանումների ընդհանուր գումարը չգերազանցի Վարկի ընդհանուր գումարի 20 տոկոսը:

գ) Ըստ վերոնշյալ «ա» եւ «բ» ենթապարբերությունների՝ նախնական ֆինանսավորման չմարված գումարի եւ նախորդ արդյունքների ֆինանսավորման համար առհանված գումարների համախառն գումարը որեւէ պահի չպետք է գերազանցի Վարկի ընդհանուր գումարի 30 տոկոսը:

Տարաձայնությունների կարգավորումը

7. Եթե մինչև Ծրագրի ավարտի ամսաթիվը որեւէ ՀՀԿՑ չի իրականացվել, ապա Վարկառուն Ծրագրի ավարտի ամսաթվից ոչ ուշ, քան 6 ամսվա ընթացքում ԱԶԲ-ին է վերադարձնում այդ ՀՀԿՑ-ի համար տրամադրված նախնական ֆինանսավորման չմարված գումարը կամ դրա համապատասխան մասը:

8. Եթե Ողջամիտ ծախսերի ընդհանուր գումարը պակաս է Վարկառուի կողմից Վարկից առհանված գումարից, ապա Վարկառուն Ծրագրի ավարտի ամսաթվից ոչ ուշ, քան 6 ամսվա ընթացքում ԱԶԲ-ին է վերադարձնում այնքան գումար, որը համարժեք է առաջացած տարբերությանը:

ԱՂՅՈՒՍԱԿ

ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՌՀԱՆՈՒՄԸ								
(\$)								
Հատկացումների հետ կապված ցուցանիշներ (ՀՀԿՑ)	ԱԶԲ ֆինանսավորման ընդհանուր հատկացում		Նախորդ արդյունքների համար ֆինանսավորում (2025 թվական)	2026	2027	2028	2029	2030
ՀՀԿՑ 1	60,000,000		5,142,856	12,000,000	13,714,286	12,000,000	8,571,429	8,571,429
ՀՀԿՑ 2	75,000,000		18,750,000	18,750,000	18,750,000	18,750,000		
ՀՀԿՑ 3	25,000,000		4,166,667	4,166,666	4,166,667	4,166,666	4,166,667	4,166,667
ՀՀԿՑ 4	5,000,000		833,334	833,333	833,333	833,333	833,333	833,334
ՀՀԿՑ 5	12 500 000		0	2,500,000	2,500,000	2,500,000	2,500,000	2,500,000
ՀՀԿՑ 6	25,000,000		0	7,142,857	5,714,286	5,000,000	3,571,428	3,571,429
ՀՀԿՑ 7	10,000,000		0			10,000,000		
ՀՀԿՑ 8	10,000,000		0		10,000,000			
ՀՀԿՑ 9	15,000,000		3 000 000		12,000,000			
ՀՀԿՑ 10	12 500 000		0		12 500 000			
Ընդամենը	250,000,000		31,892,857	45,392,856	80,178,572	53,249,999	19,642,857	19,642,859

ՀՀԿՑ ՄԱՏՐԻՑ

Հատկացումների հետ կապված ցուցանիշներ	Ելակետային արժեք	Ելակետային տարի	Նպատակային արժեքներ				2029	2030
			Նախորդ արդյունքներ (2025 թվական)	2026	2027	2028		
Արդյունք	Տնտեսական պայմանները բարելավվել են եւ էթնիկ հայ փախստականների համար ստեղծվել են երկարաժամկետ բնակարանային ապահովման ու բարելավված սոցիալական հնարավորություններ							
1. Ծրագրի շրջանակում տրամադրվել է 7,000 հիպոթեքային վարկ, որոնցից առնվազն 20%-ը տրամադրված է կանանց ղեկավարած տնային տնտեսություններին (ԱԱՀՆ)	0	2024	Ծրագրի շրջանակում տրամադրված 600 հիպոթեքային վարկ	Ծրագրի շրջանակում տրամադրված 1,400 հիպոթեքային վարկ	Ծրագրի շրջանակում տրամադրված 1,600 հիպոթեքային վարկ	Ծրագրի շրջանակում տրամադրված 1,400 հիպոթեքային վարկ	Ծրագրի շրջանակում տրամադրված 1,000 հիպոթեքային վարկ	Ծրագրի շրջանակում տրամադրված 1,000 հիպոթեքային վարկ
2. Էթնիկ հայ փախստականների աջակցության ծրագրերը ներդաշնակեցվել են փորձնական վարձակալության ծրագրերի մշակման եւ կիրառման միջոցով (ԱԱՀՆ)	Առկա չէ	2024	Վարձակալության սուբսիդավորման գոյություն ունեցող սխեման հաջողությամբ փոխակերպվել է վարձակալության աջակցության նոր ծրագրի՝ խոցելիության գնահատումից հետո	Վարձակալության ն փորձնական ծրագիրը նախագծվել, հաստատվել եւ կիրառվել է	Վարձակալության աջակցության նոր ծրագիրը հաստատվել եւ գործարկվել է	Վարձակալության աջակցության ծրագիրը հաստատվել եւ իրականացվել է		
Վերջնարդյունքներ								
Վերջնարդյունք 1. Բարելավված սոցիալական բնակարանային կառավարման քաղաքականության շրջանակը ձեւավորվել է								
3. Արտոնությունների ներդաշնակեցման համար համապարփակ	Գոյություն չունի	2024	Համապարփակ ԿՏՀ-ն մշակվել եւ գործարկվել է, եւ	Խոցելիության գնահատման համակարգի	Խոցելիության գնահատման թվայնացված	Սոցիալական պաշտպանության ոլորտի դիմումների	Սոցիալական պաշտպանության ոլորտի	Սոցիալական պաշտպանության ոլորտի դիմումների

Հատկացումների հետ կապված ցուցանիշներ	Ելակետային արժեք	Ելակետային տարի	Նպատակային արժեքներ				2029	2030
			Նախորդ արդյունքներ (2025 թվական)	2026	2027	2028		
կառավարման տեղեկատվական համակարգը (ԿՏՀ) մշակվել է և գործարկվել է (ԱՍՀՆ)			խոցելիության գնահատման թվայնացված համակարգը գործարկվել է	փորձնական տարբերակը ԿՏՀ-ի շրջանակներում իրականացվել է երկրի երկու մարզերում	համակարգը կիրառվել է հանրապետության ն ողջ տարածքում, որտեղ յուրաքանչյուր շահառու տնային տնտեսություն ստեղծել է հաշիվ եւ դիմել է աջակցություն ստանալու համար՝ համապատասխանելով «Սոցիալական աջակցության մասին» օրենքով սահմանված՝ սոցիալական պաշտպանության ոլորտի դիմումների միասնական տեղեկատվական համակարգի պահանջներին	միասնական տեղեկատվական համակարգի շահառուների կողմից ներկայացված դիմումների առնվազն 50%-ը մշակվել է ժամանակին	դիմումների միասնական տեղեկատվական համակարգի շահառուների կողմից ներկայացված դիմումների առնվազն 80%-ը մշակվել է ժամանակին	միասնական տեղեկատվական համակարգի շահառուների կողմից դիմումների 100%-ը մշակվել է ժամանակին
4. Մշակվել է ընդունվել է երկարաժամկետ բնակարանային ռազմավարություն՝ մինչ ծրագիրը գոյություն ունեցող եւ ընթացիկ բնակարանային կարիքները	Կիրառելի չէ	2024	Մշակվել է երկարաժամկետ բնակարանային համապարփակ ռազմավարություն՝ մինչ ծրագիրը գոյություն ունեցող եւ ընթացիկ	Ընդունվել է երկարաժամկետ բնակարանային համապարփակ ռազմավարություն՝ մինչ ծրագիրը գոյություն ունեցող եւ ընթացիկ	Երկարաժամկետ բնակարանային ռազմավարությունն իրականացվել է եւ ընդունվել է ռազմավարության մշտադիտարկման եւ գնահատման	Երկարաժամկետ բնակարանային ռազմավարությունն իրականացվել է հիմնարար նպատակների 20%-ի իրականացմամբ, եւ իրականացվել են	Երկարաժամկետ բնակարանային ռազմավարությունն իրականացվել է հիմնարար նպատակների 30%-ի իրականացմամբ, եւ ավարտվել է	Երկարաժամկետ բնակարանային ռազմավարությունն իրականացվել է հիմնարար նպատակների 40%-ի իրականացմամբ, եւ ավարտվել է

Հատկացումների հետ կապված ցուցանիշներ	Ելակետային արժեք	Ելակետային տարի	Նպատակային արժեքներ					
			Նախորդ արդյունքներ (2025 թվական)	2026	2027	2028	2029	2030
Լուծելու համար (ԱՍՀՆ)			բնակարանային կարիքները լուծելու համար	բնակարանային կարիքները լուծելու համար	շրջանակ	նպատակների մշտադիտարկում եւ գնահատում	մշտադիտարկման եւ գնահատման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը	մշտադիտարկման եւ գնահատման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը
Վերջնարդյունք 2. Սահմանվել են դիմակայուն եւ ներառական բնակարանային ֆինանսավորման համակարգեր								
5. 350 տնային տնտեսություն բնակվում է էներգախնայող, կայուն կամ կլիմայական կամ սեյսմիկ առումով դիմակայուն շենքերում (ԱՍՀՆ եւ ՔՇԿ)	0	2024		18 տնային տնտեսություն բնակվում է էներգախնայող, կայուն, կլիմայական առումով դիմակայուն կամ սեյսմիկ դիմակայուն շենքերում	52 տնային տնտեսություն բնակվում է էներգախնայող, կայուն, կլիմայական առումով դիմակայուն կամ սեյսմիկ դիմակայուն շենքերում	70 տնային տնտեսություն բնակվում է էներգախնայող, կայուն, կլիմայական առումով դիմակայուն կամ սեյսմիկ դիմակայուն շենքերում	105 տնային տնտեսություն բնակվում է էներգախնայող, կայուն, կլիմայական առումով դիմակայուն կամ սեյսմիկ դիմակայուն շենքերում	105 տնային տնտեսություն բնակվում է էներգախնայող, կայուն, կլիմայական առումով դիմակայուն կամ սեյսմիկ դիմակայուն շենքերում
6. Տնային տնտեսությունների դիմումները մշակվել եւ հաստատվել են, իսկ բնակարանային վկայագրերն օգտագործվել են. դրանք օգտագործողների առնվազն 20%-ը կազմում են միայնակ մայրերը կամ կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները (ԱՍՀՆ)	0	2024		2000 տնային տնտեսությունների դիմումները մշակվել եւ հաստատվել են, իսկ բնակարանային վկայագրերն օգտագործվել են. դրանք օգտագործողների առնվազն 20%-ը կազմում են միայնակ	1,600 տնային տնտեսությունների դիմումները մշակվել եւ հաստատվել են, իսկ բնակարանային վկայագրերն օգտագործվել են. դրանք օգտագործողների առնվազն 20%-ը կազմում են միայնակ	1,400 տնային տնտեսությունների դիմումները մշակվել եւ հաստատվել են, իսկ բնակարանային վկայագրերն օգտագործվել են. դրանք օգտագործողների առնվազն 20%-ը կազմում են միայնակ մայրերը	1,000 տնային տնտեսությունների դիմումները մշակվել եւ հաստատվել են, իսկ բնակարանային վկայագրերն օգտագործվել են. դրանք օգտագործողների առնվազն 20%-ը կազմում են միայնակ մայրերը	1,000 տնային տնտեսությունների դիմումները մշակվել եւ հաստատվել են, իսկ բնակարանային վկայագրերն օգտագործվել են. դրանք օգտագործողների առնվազն 20%-ը կազմում են միայնակ մայրերը

Հատկացումների հետ կապված ցուցանիշներ	Ելակետային արժեք	Ելակետային տարի	Նպատակային արժեքներ				2029	2030
			Նախորդ արդյունքներ (2025 թվական)	2026	2027	2028		
				մայրերը կամ կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները	մայրերը կամ կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները	կամ կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները	կամ կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները	կամ կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունները
Վերջնարդյունք 3. Բարելավվել են շուկայի կարգավորումները եւ ֆինանսավորման մեխանիզմները								
7. Ընդունվել է ԱՀԸ վերակառուցման ռազմավարությունը՝ շուկայահեն դառնալու եւ երկարաժամկետ բնակարանային ֆինանսավորումը խթանելու նպատակով (օրինակ՝ ՀՀ ԿԲ-ից դուրս գալու միջոցով), ընդունված է (ԱՀԸ եւ ՀՀ ԿԲ)	Կիրառելի չէ	2024				Ընդունվել է ԱՀԸ վերակառուցման ռազմավարությունը՝ շուկայահեն դառնալու եւ երկարաժամկետ բնակարանային ֆինանսավորումը խթանելու նպատակով (օրինակ՝ ՀՀ ԿԲ-ից դուրս գալու միջոցով), ընդունված է		
8. ԱՀԸ-ն կապիտալացվել է (ԱՀԸ)	55.4 46,571,00 ՀՀ դրամ 0	2024			ԱՀԸ-ն կապիտալացվել է			
9. Թողարկվել են 15 մլրդ ՀՀ դրամ արժողությամբ ԱՀԸ պարտատոմսեր (ԱՀԸ)	27 մլրդ ՀՀ դրամ չմարված է, եւ 7 մլրդ ՀՀ դրամ արժողությամբ թողարկված է	2024	Ընդունվել է վարկավորման առավելագույն գործակցի սահմանաչափը հանելու մասին կարգավորումը, ինչը հնարավորություն է տվել ավելացնել պարտատոմսերի թողարկման ծավալները		15 մլրդ ՀՀ դրամ թողարկվել է			

Հատկացումների հետ կապված ցուցանիշներ	Ելակետային արժեք	Ելակետային տարի	Նպատակային արժեքներ					
			Նախորդ արդյունքներ (2025 թվական)	2026	2027	2028	2029	2030
Վերջնարդյունք 4. Հզորացվել են հաստատությունները, եւ բարձրացվել է շահառուների իրազեկվածությունը								
10. Բոլոր էթնիկ հայ փախստականները կարող են օգտվել ոչ փախստականների համար նախատեսված գործող սոցիալական պաշտպանության ծրագրերից (ԱՍՀՆ)	Կիրառելի չէ	2024		Էթնիկ հայ փախստականներին աջակցություն է տրամադրվել ոչ փախստականների համար նախատեսված գործող սոցիալական պաշտպանության ծրագրերի համար դիմելու արդյունքում				

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 4

Ծրագրի իրականացումը

Իրականացման հետ կապված կարգավորումներ

1. Վարկառուն եւ Ծրագիրն իրականացնող մարմինն ապահովում են, որ Ծրագիրն իրականացվի համաձայն ԾԻՓ-ով սահմանված մանրամասն կարգավորումների: ԾԻՓ-ում կատարվող ցանկացած հետագա փոփոխություն ուժի մեջ է մտնում միայն այն դեպքում, երբ այդ փոփոխությունն ընդունվում է Վարկառուի եւ ԱԶԲ-ի կողմից: ԾԻՓ-ի եւ Վարկային համաձայնագրի ու Դրամաշնորհային համաձայնագրի միջեւ հակասության դեպքում գերակայում են Վարկային համաձայնագրի ու Դրամաշնորհային համաձայնագրի դրույթները:

2. Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի շրջանակում Ողջամիտ ծախսերի գումարը համարժեք լինի Վարկառուի կողմից Ծրագրի համար առհանված Վարկային եւ Դրամաշնորհային միջոցների ընդհանուր չափին կամ գերազանցի այն: Ողջամիտ ծախսերը ԲՏԸԲԱԾ-ի շրջանակում կատարված ծախսերի մասն են՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ծախսերը կատարվել են՝ ա) ԱԶԲ-ի կողմից արգելված կամ կասեցված անձանցից կամ կազմակերպություններից աշխատանքներ, ապրանքներ կամ ծառայություններ գնելու համար, բ) այնպիսի գնումների համար, որոնք ներառում են Բարձրարժեք պայմանագրեր, գ) այնպիսի գործունեությունների համար, որոնք շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունենալու տեսանկյունից դասակարգվում են որպես Ա կատեգորիայի՝ ըստ ԵԲՓ-ի, դ) այնպիսի գործունեությունների համար, որոնք գնահատվում են որպես զգայուն, բազմազան կամ աննախադեպ բացասական ազդեցություն ունեցող՝ շրջակա միջավայրի կամ ազդեցությունը կրած մարդկանց վրա, ե) ԵԲՓ-ի 5-րդ հավելվածով սահմանված արգելված ներդրումային գործունեություններ համարվող գործունեությունների համար:

ՀՀԿՑ-ի հետ համապատասխանություն եւ Ծրագրային քննարկումներ

3. Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի շրջանակներում արդեն իսկ իրագործված բոլոր ՀՀԿՑ-ներին համապատասխանությունը շարունակի պահպանվել իր Ծրագրի ամբողջ ընթացքում:

4. Վարկառուն ԱԶԲ-ին տեղեկացնում է այն բազմակողմ կամ երկկողմ աջակցություն ցուցաբերող մարմինների հետ ընթացող քննարկումների մասին, որոնք կարող են ազդեցություն ունենալ Վարկառուի ծրագրի եւ Ծրագրի իրականացման վրա, ինչպես նաեւ ԱԶԲ-ին ընձեռում է դրանից բխող առաջարկների վերաբերյալ կարծիք հայտնելու հնարավորություն: Նախքան այդպիսի որեւէ առաջարկի վերջնական տարբերակի մշակումը եւ իրականացումը Վարկառուն պետք է հաշվի առնի ԱԶԲ-ի տեսակետները:

Տեխնիկական եւ գործառնական պահանջներ

5. Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի շրջանակում տեխնիկական եւ գործառնական պահանջներին (ներառյալ՝ ԱՍՄ-ն, ԴԳ-ն, հակակոռուպցիոն միջոցառումները) վերաբերող բոլոր գործողություններն իրականացվեն ժամանակին եւ արդյունավետ:

Ֆինանսական կառավարում

6. Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի ֆինանսական կառավարմանը վերաբերող բոլոր գործողություններն իրականացվեն ժամանակին եւ արդյունավետ:

Գնումներ

7. Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի շրջանակում յուրաքանչյուր պայմանագիր կնքվի Ծրագրի գնումների համակարգի համաձայն՝ պահպանելով մրցակցության, արդյունավետության, թափանցիկության, արդարության եւ հավասար հնարավորությունների ապահովման սկզբունքները:

8. Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի գնումներին վերաբերող բոլոր գործողություններն իրականացվեն ժամանակին եւ արդյունավետ:

Բնապահպանական եւ սոցիալական երաշխիքներ

9. Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի՝ բնապահպանական եւ սոցիալական երաշխիքներին վերաբերող բոլոր գործողություններն իրականացվեն ժամանակին եւ արդյունավետ:

10. ա) Վարկառուն ապահովում է, որ Ծրագիրը չներառի որեւէ բնապահպանական ռիսկեր կամ ազդեցություն՝ ԵԲՓ-ի իմաստով: Եթե Ծրագիրը, չնախատեսված հանգամանքներով պայմանավորված, պարունակի այդպիսի ազդեցություններ, ապա Վարկառուն պարտավորվում է ապահովել համապատասխանություն՝ ա) Վարկառուի բոլոր կիրառելի օրենքներին եւ կանոնակարգերին, որոնք վերաբերում են շրջակա միջավայրին, առողջությանը եւ անվտանգությանը, բ) բնապահպանական երաշխիքներին, եւ գ) բոլոր միջոցառումներին եւ պահանջներին, ներառյալ՝ Ծրագրի գործողությունների ծրագրում սահմանված մշտադիտարկման պահանջները:

բ) Չհակասելով վերոնշյալ «ա» ենթապարբերությանը՝ Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի շրջանակում որեւէ շինարարական կամ վերանորոգման աշխատանք էական բացասական ազդեցություն չունենա շրջակա միջավայրի վրա, որոնք կարող են դասակարգվել որպես Ա կատեգորիայի՝ ըստ ԵԲՓ-ի: Ծրագրի շրջանակներում որեւէ շինարարական կամ վերանորոգման աշխատանքներ սկսելուց առաջ Վարկառուն անցկացնում է ստուգում՝ համոզվելու

համար, որ ԵԲՓ-ի համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության առումով Ա կատեգորիայի դասակարգված ցանկացած աշխատանք բացառվում է Ծրագրից:

11. Վարկառուն ապահովում է, որ Ծրագիրը չներառի վերաբնակեցման որեւէ ռիսկ կամ ազդեցություն՝ ԵԲՓ-ի իմաստով: Եթե Ծրագիրը, չնախատեսված հանգամանքներով պայմանավորված, պարունակի այդպիսի ազդեցություններ, ապա Վարկառուն պարտավորվում է ապահովել համապատասխանություն՝ ա) Վարկառուի բոլոր կիրառելի օրենքներին եւ կանոնակարգերին, որոնք վերաբերում են վերաբնակեցմանը, բ) հարկադիր վերաբնակեցման երաշխիքներին, եւ գ) բոլոր միջոցառումներին եւ պահանջներին, ներառյալ՝ Ծրագրի գործողությունների ծրագրում սահմանված մշտադիտարկման պահանջները:

12. Վարկառուն ապահովում է, որ Ծրագիրը չներառի բնիկ ժողովուրդներին սպառնացող որեւէ ռիսկ կամ ազդեցություն՝ ԵԲՓ-ի իմաստով: Եթե Ծրագիրը, չնախատեսված հանգամանքներով պայմանավորված, պարունակի այդպիսի ազդեցություններ, ապա Վարկառուն պարտավորվում է ապահովել համապատասխանություն՝ ա) Վարկառուի բոլոր կիրառելի օրենքներին եւ կանոնակարգերին, որոնք վերաբերում են բնիկ ժողովուրդներին, բ) բնիկ ժողովուրդների երաշխիքներին, եւ գ) բոլոր միջոցառումներին եւ պահանջներին, ներառյալ՝ Ծրագրի գործողությունների ծրագրում սահմանված մշտադիտարկման պահանջները:

Գենդերային եւ սոցիալական հավասարություն

13. Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի՝ գենդերային եւ սոցիալական հավասարությանը վերաբերող բոլոր գործողություններն իրականացվեն ժամանակին եւ արդյունավետ:

Կառավարումը եւ կոռուպցիայի դեմ պայքարը

14. Վարկառուն ապահովում է կամ Ծրագրի իրականացնող մարմնից պահանջում է ապահովել Ծրագրի համապատասխանությունը Կոռուպցիայի դեմ պայքարի հարցերով ուղեցույցներին եւ իրականացնում է անհրաժեշտ եւ ժամանակին իրականացվող բոլոր միջոցառումները՝ կանխելու, բացահայտելու համար բոլոր հնարավոր կոռուպցիոն կամ արգելված գործողությունները եւ արձագանքելու այդ գործողություններին:

15. Վարկառուն պարտավորվում է կամ պահանջում է Ծրագիրն իրականացնող մարմնից կամ իրականացման հարցերով պատասխանատու մարմիններից՝ ա) անհապաղ տեղեկացնել ԱԶԲ-ին Ծրագրին վերաբերող խարդախության, կոռուպցիայի կամ որեւէ այլ արգելված գործունեության մասով ցանկացած մեղադրանքի մասին, եւ բ) լիովին համագործակցել ԱԶԲ-ի կողմից նման մեղադրանքների վերաբերյալ ցանկացած հետաքննության եւ տրամադրել անհրաժեշտ ողջ օգնությունը, ներառյալ՝ բոլոր համապատասխան գրանցամատյաններին հասանելիություն տրամադրելը՝ այդպիսի հետաքննությունը բավարար ձեով ավարտելու համար:

16. Ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո 90 օրվա ընթացքում Վարկառուն պետք է թարմացնի իր հանրային կայքը կամ պարտավորեցնի Ծրագիրն իրականացնող մարմնին եւ իրականացման համար պատասխանատու մարմիններին թարմացնել այն, որ՝ ա) տեղեկություններ տրամադրի Ծրագրի առաջընթացի վերաբերյալ, բ) հրապարակի Ծրագրի տարեկան աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները, հենց որ դրանք հասանելի դառնան, եւ գ) տարածի Ծրագրի իրականացման վերաբերյալ այլ համապատասխան տեղեկություններ: